ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **«30» նոյեմբերի**

2023թ. Ժամը 16[30]

ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստին ներկա էին՝

Խորհրդի նախագահ՝

Ժ. Անդրեասյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Խորհրդի անդամներ՝

Ա. Դանիելյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ

Ռ. Գևորգյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Մ. Թադևոսյան - «Մասնակցային դպրոց» կրթական ծրագրի հիմնադրամի անդամ

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ա. Բախշյան - «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական

Ա. Հակոբյան - «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն

<u>Բացակայում էին՝</u>

Լ. Բալյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Վ. Սիրունյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Մասնակցում էին՝

Վ. Մատիկյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար
Ռ. Գալստյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Ա. Բաղդասարյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Զ. Միքայելյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության պետ
Հ. Խաչատրյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետին փոխարինող
Ա. Գևորգյան	- Խորհրդի քարտուղար
Ա. Հայրումյան	- Խորհրդի քարտուղարության անդամ

Հրավիրվածներ՝

Ա. Սվաջյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Ա. Հովհաննիսյան	-«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի ներկայացուցիչ

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐ

1. ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2024 թվականի տարեկան ծրագրի հաստատում:

2. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրի հաստատում:

3. ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի գործունեության 2024 թվականի ծրագրի հաստատում:

Ընթացիկ հարց՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2024 թվականի բյուջետային հայտի նախագին հավանություն տալու մասին:

Նիստը վարում էր Խորհրդի նախագահ **Ժ. Անդրեասյանը:**

Նախագահի առաջարկով Խորհուրդը քվեարկությամբ՝ **7 կողմ ձայնով** (միաձայն) հաստատեց օրակարգը:

Խորհրդի համաձայնությամբ **Վ. Մատիկյանը** սկզբում ներկայացրեց օրակարգի 2-րդ հարցը՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը: Ասաց, որ համաձայն 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումներ կիրականացվեն 112 հանրակրթական ուսումնական հաստատությունում, (որից՝ 95 դպրոցներում, 5 նախադպրոցական ուսումնական հաստատությունում), 1 նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում և 11 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Այնուհետև ներկայացրեց ստուգվող ուսումնական հաստատությունների ընտրության սկզբունքը, և նշեց, որ ստուգումների տարեկան ծրագիրը կազմված է ռիսկերի մեթոդաբանության հիման վրա, և 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառվել են 91 բարձր ռիսկային, 33 միջին ռիսկային և 6 ցածր ռիսկային խմբերի ուսումնական հաստատություններ: Նշեց նաև, որ ստուգվող 112 հանրակրթական ուսումնական հաստատություններից 111-ը ստուգվելու են առաջին անգամ:

Քննարկման ընթացքում խորհրդի անդամները հնչեցրին ռիսկերի մեթոդաբանության մշակմանը և ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության արդյունավետությանն ուղղված կարծիքներ: Խորհրդի նախագահ **Ժ. Անդրեասյանը** առաջարկեց վերանայել ռիսկերի մեթոդաբանությունը՝ հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալները, և առաջիկա շաբաթվա ընթացքում համատեղ քննարկել առկա խնդիրները: Ներկայացվեցին առաջարկություններ՝ ամբողջացնել ռիսկերի գնահատման գործիքակազմը, ինչը կնպաստի նաև վերահսկողական գործառույթների արդյունավետության բարձրացմանը՝ մասնավորապես առավել թիրախային դարձնել ուսումնական հաստատություններում խնդրահարույց իրավիճակներին արձագանքելը:

Հաջորդիվ **Վ. Մատիկյանն** անդրադարձավ օրակարգի 1-ին հարցին՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2024 թվականի տարեկան ծրագրին:

Ներկայացրեց «Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» ծրագիրը, որն իրականացվում է 2023 թվականից: Ծրագրով իրականացվում են դասալսումներ՝ սահմանված կարգով ընդգրկված մասնագետների կողմից: Ստուգվող դպրոցների՝ 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում տրվում են գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից: Դասալսումներից զատ նաև գնահատվում է ուսուցչի աշխատանքը (ուսուցչի էթիկան, դասարանի և ժամանակի կառավարումը, կիրառվող մեթոդները և վերջնարդյունքների՝ չափորոշչին համապատասխանությունը):

Վ. Մատիկյանը հայտնեց, որ 2023 թվականին մշակվել է հանրակրթության պետական չափորոշչով սահմանված 8 կարողունակություններից 1-ի (ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն) գնահատման մոդելը (ռուբրիկ)՝ ըստ «Սովորող», «Պատասխանատու օղակներ» և «Միջավայր» ուղղությունների: 2024 թվականին նախատեսվում է մշակել նոր ռուբրիկներ՝ըստ հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված բոլոր կարողունակությունների: Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի որակի գնահատման ռուբրիկները կիրառվելու են կրթության որակին վերաբերող հարցերի գնահատման, ինչպես նաև լավագույն փորձի փոխանակման, հանրայնացման նպատակով:

Վ. Մատիկյանը նշեց, որ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում վերահսկողությունն առավել արդյունավետ իրականացնելու, այդ թվում՝ դասախոսներին տեղում մեթոդական աջակցություն ցուցաբերելու, դասավանդման ընթացքում առաջացած խնդիրների բարձրաձայնման և դրանց լուծմանը միտված առաջարկությունների ներկայացման, կրթության կազմակերպման, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության որակը բարձրացնելու նպատակով, նախատեսվում է «Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» ծրագիրը իրականացնել նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին

մասնագիտական կրթության ոլորտում: Ծրագիրը՝ «Ձեռներեցություն» առարկայի մասով՝ կփորձարկվի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրով:

Վ. Մատիկյանը տեղեկացրեց նաև, որ իրականացվել է շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների: Գնահատման արդյունքների վերլուծությունները՝ համապատասխան առաջարկներով, ուղարկվել են ուսումնական հաստատությունների տնօրեններին:

Խոսեց հետադարձ կապի նոր ձևաչափի մասին, նշելով, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում ստուգման ավարտից հետո իրականացվում է հանդիպում հաստատության մանկավարժական աշխատողների հետ՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի գործառույթների, ստուգման ընթացքի և արդյունքների համառոտ նկարագրությունը ներկայացնելու, ինչպես նաև կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության վերաբերյալ խորհրդատվություն իրականացնելու նպատակով: Հանդիպման ավարտին մասնակիցների կողմից ներկայացված հարցերին հնարավոր դեպքերում տեղում տրվում են սպառիչ պատասխաններ, անհնարինության դեպքում հարցերը, ինչպես նաև առաջարկությունները միջնորդավորված ներկայացվում են համապատասխան հասցեատերերին: Նշված միջոցառման նպատակը ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության թափանցիկության ու հրապարակայնության, ինչպես նաև մանկավարժական աշխատողների կողմից ներկայացվող հարցերին և առաջարկներին համապատասխան լուծումներ տալու աշխատանքների կազմակերպման ապահովումն է:

2024 թվականին նախատեսվում է իրականացնել ծնողների հետ հանդիպումներ՝ նոր ձևաչափով, որը բաղկացած կլինի 3 փուլից: Առաջին փուլում կներկայացվեն ծնողների պարտականություններին և իրավունքներին վերաբերող իրավակարգավորումները, երկրորդ փուլում՝ իրական դեպքերի հիման վրա կազմված կոնֆլիկտային իրավիճակներ և երրորդ փուլում՝ ծնողների հետ հետադարձ կապի ապահովման նպատակով կտրվեն իրավիճակային հանձնարարություններ:

ՀՀ կրթության տեսչական մարմինը 2024 թվականին նախատեսում է վերակշռավորել հանրակրթության ուսումնական հաստատություններում անցկացվող ստուգումների ստուգաթերթերը՝ ըստ «Հանրակրթության մասին» օրենքի 5-րդ հոդվածով սահմանված՝ հանրակրթության բնագավառում պետության կողմից երաշխավորված՝ յուրաքանչյուր սկզբունքի գնահատումն իրականացնել սանդղակային սկզբունքով: Այսպիսի լուծման շնորհիվ նաև համակարգային լուծում կստանա ուսումնական հաստատություններում խնդրահարույց իրավիճակների արդյունավետ թիրախավորումը:

Ելույթի վերջում **Վ. Մատիկյանը** հայտնեց, որ սկսվել է նաև տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների ուսումնական հաստատությունների ռիսկերի գնահատման աշխատանքների թվայնացման գործընթացը, ներկայացրեց հարթակի այս պահին առկա աշխատանքային տարբերակը:

Ամփոփելով նիստը՝ **Ժ. Անդրեասյանն** առաջարկեց քվեարկել օրակարգում նշված հարցերը՝ պայմանով, որ հաջորդ շաբաթ կայանալիք հանդիպման ընթացքում քննարկվեն օրակարգի 2 հարցերի վերաբերյալ ներկայացված առաջարկները:

Խորհուրդը՝ 7 կողմ ձայներով հաստատեց և հավանություն տվեց օրակարգի հարցերին:

1. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2024 թվականի տարեկան ծրագիրը:
2. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:
3. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի գործունեության 2024 թվականի ծրագիրը:

4. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2024 թվականի բյուջետային հայտի նախագիծ:

Recoverable Signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Խորհրդի նախագահ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

_____ **Ժ. Անդրեասյան**

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝ _____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն